

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
09.22.2020թ. նիստի N 1 արձանագրություն

Օրակարգ

1. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. ԵԼՀ ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի կազմում ընդգրկված 36 անդամներից նիստին ներկա էին 30-ը : Նախքան նիստի հարցերին անդրադառնալը ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը շնորհավորեց գործընկերներին 2020-2021 ուս.տարվա մեկնարկի կապակցությամբ և մաղթեց արդյունավետ աշխատանք՝ հույս հայտնելով, որ COVID-19-ի պատճառած վտանգներն ու բարդությունները մոտ ապագայում կվերանան, և դասերը կշարունակվեն բնականոն հունով : Գ.Բարսեղյանը ներկայացրեց գիտխորհրդի երկու նոր անդամներին՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի նորանշանակ ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Ա.Սեդրակյանին և ուսխորհրդի նորընտիր նախագահ Լ.Տեր-Հովհաննիսյանին՝ ակնկալելով համատեղ բեղմնավոր աշխատանք :

1.ԼՄԵՑԻՆ՝ Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատման հարցը: Հետևյալ ուսանողները առաջին կիսամյակում կստանան անվանական կրթաթոշակ :

1.Ասլիբեկյան Օֆելյա /անգլ. լեզու և գրակ. մագիստրատուրա 2-րդ կուրս, Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ /:

2.Մշեցյան Մելինե /ԼՄՀ 4-րդ կուրս, Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ/:

3.Շալունց Ալվարդ /գերմ. լեզու և գրակ., մագիստրատուրա 2-րդ կուրս, Հ.Աճառյանի անվան կրթաթոշակ/:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց առաջին կիսամյակում վերոհիշյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

2.ԼՍԵՑԻՆ՝ Գ.Բարսեղյանը նարկայացրեց ԵԼՀ Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ԵԼՀ Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս. տարվա աշխատանքային պլանը: Որոշումն ընդունվեց միաձայն:

3.Ընթացիկ հարցեր

- **ԼՍԵՑԻՆ՝** Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա.Սեդրակյանը ներկայացրեց Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվահասարակագիտական համալսարանի 2004 թ. շրջանավարտ **Քրիստինե Սերոժի Խաչատրյանի՝** հայցորդ ձևակերպելու հարցը: Բ.գ.թ. դոցենտ Անուշ Սեդրակյանը, նշեց, որ Քրիստինե Խաչատրյանը ավարտել է վերոհիշյալ բուհի ֆրանսերեն լեզվի և գրականության բաժինը և ուսումնասիրում է ժամանակակից ֆրանսիական գրականություն, ունի տպագրված գիտական հոդվածներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնում հայցորդ ձևակերպել **Քրիստինե Խաչատրյանին** և հաստատել **«Ռենե Շարլ ֆրանսիական պոեզիայի համատեքստում»** թեկնածուական ատենախոսության **թեման՝** Ժ.01.07 արտասահմանյան գրականություն մասնագիտությամբ, և գիտական ղեկավար նշանակել Բ.գ.թ. դոց. Անուշ Սեդրակյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

- **ԼՍԵՑԻՆ՝** Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Շ. Պարոնյանը ներկայացրեց Անի Արայի Միմոնյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ *Multimodality and Multimediality in Contemporary Public Communication* («Տեղեկատվության բովանդակության և գործիքակազմի բազմազանությունը արդի հանրային խոսքում») վերնագրով: Ատենախոսության ղեկավար Բ.գ.դ., դոցենտ Գ.Մուրադյանը նշեց, որ աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում հանգամանալից ներկայացնելու արդի տեղեկատվական բազմեղանակությունը անգլալեզու հանրային դիսկուրսում՝ քաղաքական ելույթներում, հեռուստահաղորդումներում, տեղեկատվության թվային բազմազան միջոցներում: Գիտխորհրդի անդամները դրական կարծիքներ հնչեցրին թեմայի արժեքավորության, գիտական և տեսական կարևորության վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունը՝ հաստատել Ա. Սիմոնյանի՝ Multimodality and Multimediality in Contemporary Public Communication («Տեղեկատվության բովանդակության և գործիքակազմի բազմազանությունը արդի հանրային խոսքում») թեկնածուական ատենախոսության թեման և որպես գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., դոց. Գ. Մուրադյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

- **ԼՍԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ասպիրանտ Արաքսյա Ստեփանյանի՝ "Ժամանակակից անգլերենի նորաբանությունների իմաստաճանաչողական հայեցակերպը (հայերենի զուգադրությամբ)" թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտ. ղեկավարի հաստատման հարցը: Ս.Գասպարյանը ներկայացրեց ատենախոսության թեման՝ "Ժամանակակից անգլերենի նորաբանությունների իմաստաճանաչողական հայեցակերպը (հայերենի զուգադրությամբ)" ձևակերպմամբ: Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Գասպարյանը, Ե.Երզնկյանը նշեցին, որ թեման արդիական է և միանգամայն հնարավոր է այն արդյունավետ իրականացնել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, ակնկալվող նորույթը, նաև տեսական ու գործնական կարևորությունը՝ հաստատել Արաքսյա Ստեփանյանի՝ "Ժամանակակից անգլերենի նորաբանությունների իմաստաճանաչողական հայեցակերպը (հայերենի զուգադրությամբ)" վերնագրով թեկնածուական ատենախոսության թեման և ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Ե.Երզնկյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոց.՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոց.՝



Մ.Դավալյան